



Հաստատված է

ՀՀ կրթության տեսչական մարմնի
կառավարման խորհրդի
2019 թ. նոյեմբերի 28-ի N 5 (10) որոշմամբ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ
ԾՐԱԳԻՐ**

2020

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

N	ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԷԶԸ
	Ներածություն	2
	Ընդհանուր իրավիճակը	2
	Ծրագրի նպատակը	8
I	Ծրագրի խնդիրներից բխող միջանկյալ արդյունքները՝ ըստ թիրախների	10
	Նախադպրոցական կրթության ոլորտի խնդիրներից բխող գործողությունները՝ ըստ միջանկյալ արդյունքների	13
V	Հանրակրթության ոլորտի խնդիրներից բխող գործողությունները՝ ըստ միջանկյալ արդյունքների	17
V	Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտի խնդիրներից բխող գործողությունները՝ ըստ թիրախների	21
V	Հաշվետվողականություն	24
I	Որակի ապահովման ստորաբաժանման 2020 թվականի գործունեության միջոցառումների ծրագիր	25
	Կանխարգելիչ և իրազեկման միջոցառումների տարեկան ժամանակացույց	26
V	Խորհրդատվական գործառույթների ժամանակացույցներ (Աղյուսակներ NN 1, 2)	29

I. Ներածություն

Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմնի (այսուհետ՝ տեսչական մարմին) գործունեության 2020 թվականի տարեկան ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) մշակվել է՝

➤ **ղեկավարվելով** «Տեսչական մարմինների մասին», «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» և կրթության բնագավառը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենքների պահանջներով, Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության ծրագրի՝ կրթության բնագավառին վերաբերող դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019-2023 թվականների գործունեության միջոցառումների ծրագրով.

➤ **հիմք ընդունելով** Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 729-L որոշմամբ հաստատված տեսչական մարմնի կանոնադրության պահանջները.

➤ **հիմք ընդունելով** տեսչական մարմնի և Կրթության պետական տեսչության նախորդ տարիների գործունեության արդյունքների վերլուծական տվյալները, վերահսկողական գործառույթների արդյունքում հայտնաբերված՝ սովորողների (երեխաների) կրթական իրավունքի պետական երաշխիքների պահպանմանը, կրթության որակի բարձրացմանը, կրթական ծրագրերի յուրացմանը, պետական կրթական չափորոշիչների պահանջների կատարմանը խոչընդոտող ռիսկի գործոնների հիման վրա ձևավորված տվյալների բազան (ըստ տնտեսավարող սուբյեկտների ռիսկերի դասակարգման) և ռիսկերի կառավարումը:

II. Ընդհանուր իրավիճակը

Հայաստանում կրթության ոլորտը կարևորվում է որպես երկրի կայուն առաջընթացի նախապայմաններից մեկը, ուստի այս ոլորտի զարգացումը երկրի զարգացման գերակայություններից մեկն է:

Առաջնային խնդիր է՝ կրթական համակարգի բոլոր մակարդակներում կրթության որակի և արդյունավետության բարձրացումը:

Կրթության որակը՝ որպես կրթական քաղաքականությամբ սահմանված նպատակների և խնդիրների իրագործմանը միտված կրթության կազմակերպման չափելի արդյունք, գնահատվում է իր մեջ ներառվող բաղկացուցիչների արդյունքներով.

<p>Կրթության որակը ներառում է հետևյալ բաղադրիչները՝</p>	<ol style="list-style-type: none"> 1) սովորողի անհատական կարիքներ (հանրակրթական հիմնական ծրագրերը յուրացնելու համար անհրաժեշտ պայմաններ) 2) կրթության կազմակերպման գործընթաց (բարձր որակավորում և պատրաստվածություն ունեցող մանկավարժական և վարչական համակազմ) 3) ուսուցման ծրագրային բովանդակություն (կրթական չափորոշիչներ, առարկայական ծրագրեր) 4) կրթության կազմակերպման միջավայր (շենքային պայմաններ, ուսումնական միջավայր, կրթական պաշարներ, ուսումնական գրականություն) 5) ուսումնառության գնահատված արդյունքներ (սովորողների ուսումնական առաջադիմության ընթացիկ և ամփոփիչ (կիսամյակային և տարեկան) գնահատում, հանրակրթության պետական չափորոշիչի պահանջներին սովորողների համապատասխանության ստուգում՝ պետական ամփոփիչ ատեստավորում) 6) կառավարում (կառավարման խորհուրդ, տնօրեն)
--	--

Առաջնորդվելով «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման ու անցկացման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի պահանջներով՝ տեսչական մարմինը ստուգումներ է իրականացնում ՀՀ կառավարության 2018 թվականի հոկտեմբերի 4-ի N 1139-Ն որոշմամբ հաստատված ստուգաթերթերով, որոնք ընդգրկում են ՀՀ կրթության բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների սպառիչ ցանկը՝ համապատասխան կշռային միավորներով:

Միայն օրենսդրության պահանջների խախտումների արձանագրումը և ըստ ստուգաթերթերի իրականացվող ռիսկայնության գնահատումը, սակայն, հնարավորություն չեն տալիս ամբողջական ու հստակ պատկերացում կազմել կրթության որակի և ոլորտում առկա խնդիրների մասին:

«Տեսչական մարմինների մասին» և «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքները չեն կարգավորում կրթության բնագավառի առանձնահատկություններից բխող հարաբերություններն ու գործառույթները, ինչպես նաև ստուգումների և ուսումնասիրությունների կազմակերպման և անցկացման հետ կապված հարաբերություններն ու դրանց իրականացման միասնական կարգը:

Տեսչական մարմնի նպատակը կրթության բնագավառի օրենսդրության պահանջների պահպանման ապահովումն է, կրթության որակի բարձրացումը և կրթական ծրագրերի յուրացման ապահովմանն աջակցումը, ինչը պահանջում է տվյալ ոլորտին յուրահատուկ գործիքակազմի և վերահսկողական հիմնավորված ընթացակարգերի (ստուգում,

տեսչավորում, ուսումնասիրություն, մշտադիտարկում) առկայություն, կրթության ոլորտի խորքային խնդիրների բացահայտում, կրթության որակի բարելավմանը խոչընդոտող պատճառների բացահայտում և զարգացման ուղիների որոնում:

Կրթության ոլորտի նկատմամբ վերահսկողությունը կարգավորող ՀՀ օրենսդրության թերությունների բացահայտման, կրթության ոլորտի հաշվետվողականության բարձրացման նպատակով անհրաժեշտ է ապահովել կրթության բնագավառի պետական վերահսկողությունը կարգավորող օրենսդրական հիմքերի առկայությունը՝ հաշվի առնելով կրթության բնագավառի բոլոր ոլորտների առանձնահատկությունները:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի մարտի 27-ի N 442-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրի»՝ հանրակրթության որակի բարձրացման համար նորագույն տեխնոլոգիաների ներդրման առաջնահերթության կարևորումը, Հայաստանի Հանրապետության նախագահի՝ նոր տեխնոլոգիաների, արհեստական բանականության, մաթեմատիկական մոդելավորման, մեծածավալ տեղեկատվության կառավարման վրա կենտրոնանալու կոչն ու նախաձեռնությունը, Հայաստանի Հանրապետության վարչապետի՝ կրթության ոլորտում հանրակրթությունը որպես ամենասկզբունքային հարց ընդունելու, մեր երկիրը տեխնոլոգիապես զարգացած պետություն դարձնելու տեսլականը, Հայաստանի Հանրապետության կրթության, մշակույթի և սպորտի նախարարի՝ կրթության ոլորտում թվային տեխնոլոգիաների ներդրման կարևորումը, ինչպես նաև Տեղեկատվական տեխնոլոգիաների Երևանում կայացած համաշխարհային կոնգրեսում (WCIT) քննարկված՝ մեր կյանքում տեղեկատվական, հաղորդակցական տեխնոլոգիաների կարևորագույն նշանակությունը՝ նպատակահարմար ենք գտնում վերահսկողական գործառույթների միջոցով ոչ միայն պարզել հանրակրթության ոլորտում «Մաթեմատիկա» («Հանրահաշիվ», «Երկրաչափություն») և «Ինֆորմատիկա» առարկաների ուսուցման և ուսումնառության վիճակը, այլև՝ մեթոդական-մանկավարժական աջակցություն տրամադրել նշված առարկաների ուսուցիչներին:



Այս գործառույթի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ է ստեղծել մասնագիտական և մանկավարժամեթոդական բարձր պատրաստվածություն ունեցող մասնագետների (դասալսողների) և տարբեր առարկաների գրավոր առաջադրանքների շտեմարաններ, մշակել միջամտության ձևերի և գործիքակազմի բազմազանություն և ապահովել դրանց գործածությունը տեսչական մարմնի վերահսկողական, իրազեկման և խորհրդատվական գործառույթների իրականացման ընթացքում:



Տեսչական մարմնի կողմից 2019 թվականին իրականացված վերահսկողական գործառույթների ընթացքում ուսումնական հաստատությունների 7-11-րդ դասարաններում տրված գրավոր աշխատանքների արդյունքում ստացվել է հետևյալ պատկերը, ինչը ցույց է


տալիս «Հայոց լեզու» և «Մաթեմատիկա» առարկաների ուսումնառության ցածր մակարդակը: Պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ «Բավարար» գնահատված սովորողների մեծ մասի գնահատականը նվազագույն մակարդակում է.

Մարզը	Առարկան	Գրավոր աշխատանքին մասնակցած սովորողների թիվը	Գերազանց	Լավ	Բավարար	Մնբարձր
Արմավիր	Հայոց լեզու	509	17 3%	160 32%	167 33%	165 32%
	Մաթեմատիկա	541	12 2%	64 12%	213 39%	252 47%
Գեղարքունիք	Հայոց լեզու	269	16 6%	69 25%	80 30%	104 39%
	Մաթեմատիկա	255	1 0%	48 19%	97 38%	109 43%
Կոտայք	Հայոց լեզու	607	71 12%	242 40%	186 30%	108 18%
	Մաթեմատիկա	602	19 3%	85 14%	282 47%	214 36%
Շիրակ	Հայոց լեզու	705	99 14%	268 38%	230 33%	108 15%
	Մաթեմատիկա	698	30 4%	170 25%	342 49%	156 22%
Սյունիք	Հայոց լեզու	331	59 18%	134 40%	99 30%	39 12%
	Մաթեմատիկա	321	30 9%	46 14%	125 39%	120 38%
Վայոց ձոր	Հայոց լեզու	155	25 16%	60 39%	40 26%	30 19%
	Մաթեմատիկա	166	13 8%	38 23%	79 47%	36 22%

Ստորև ներկայացված են «Հայոց լեզու» և «Մաթեմատիկա» առարկաների գրավոր աշխատանքների միջին արդյունքներն (10 միավորային համակարգ) ըստ դասարանների և մարզերի.







Տեսչական մարմնի կողմից իրականացված վերահսկողական գործառնությունների արդյունքում պարզվել է նաև, որ առկա են նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների կոլեգիալ կառավարման մարմինների (այսուհետ՝ խորհուրդ) գործունեության և դրա նկատմամբ արդյունավետ վերահսկողության իրականացման օրենսդրական բացեր: Օրենսդրության մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելուն զուգընթաց, անհրաժեշտ է ստեղծել համապատասխան գործիքակազմ՝ խորհրդի գործունեությունը վերահսկելու և համապատասխան մեթոդական աջակցություն ցուցաբերելու նպատակով:

III. Ծրագրի նպատակը


Ծրագրի նպատակը բխում է տեսչական մարմնի նպատակներից և խնդիրներից:

Տեսչական մարմնի նպատակն է՝ օրենքով սահմանված դեպքերում և կարգով տեսչական մարմնի վերահսկողության ոլորտում (նախադպրոցական կրթություն, հանրակրթություն, նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական

կրթություն) օրենսդրության պահանջների պահպանման ապահովումը, կրթության որակի բարձրացումը և կրթական ծրագրերի յուրացման ապահովմանն աջակցումը:

Տեսչական մարմնի խնդիրներն են՝ վերահսկողության ոլորտում ռիսկերի կառավարումը և Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ իրավական ակտերի պահանջների պահպանումը, ինչպես նաև նշված ոլորտներում կանխարգելիչ միջոցառումների իրականացումը:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության բնագավառում տիրող առկա վիճակը, տեսչական մարմնի նախորդ և ընթացիկ տարիներին իրականացրած վերահսկողական գործառնությունների արդյունքում կուտակված տեղեկատվությունը և ռիսկերի գնահատման բազայի թարմացված տվյալները՝ սահմանվել է Ծրագրի նպատակը:



IV. Ծրագրի խնդիրներից բխող միջանկյալ արդյունքներն ըստ թիրախների

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են ծրագրի խնդիրներից բխող միջանկյալ արդյունքներն՝ ըստ թիրախների.

ՈԼՈՐՏԸ	Միջանկյալ արդյունք 1	Միջանկյալ արդյունք 2
<p style="writing-mode: vertical-rl; transform: rotate(180deg);">ՆԱՍՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ</p>	<p>Տեսչական մարմնի 2020թ. ստուգումների տարեկան ծրագրում ներառված <u>տարատարիք</u> խմբեր ունեցող ՆՈՒՅ-երը ունեն համապատասխան պատկերացում երեխայի տարիքային խմբին համապատասխան միջավայր ստեղծելու և ապահովելու ուղղությամբ</p> <p><u>Թիրախ</u>՝ Մանկապարտեզների խմբերում ընդգրկված երեխաների համար, որոնց տարիքները չեն համապատասխանում տվյալ տարիքային խմբին, չափորոշչի համապատասխան որակական պահանջները չեն իրականացվում:</p> <p><u>Յիմնավորում</u>՝ Տարատարիք (մի խմբում առկա են երկու կամ ավելի տարիքային խմբերի երեխաներ) խմբերում հիմնականում տարբերակված (տարիքային հենքին համապատասխան) ուսուցում չի իրականացվում, չափորոշչի համապատասխան որակական պահանջները չեն իրականացվում, ինչը խոչընդոտ է երեխաների համակողմանի զարգացման համար: Տարատարիք խմբեր ունեցող նախադպրոցական ուսումնական հաստատություններում հիմնականում առկա են տարիքային խմբին համապատասխան ծրագրերը, ինչի պատճառով էլ փաստաթղթային ստուգումների արդյունքում առկա խնդիրները հնարավոր չի լինում վերհանել: Մինչդեռ քննարկումների ընթացքում համապատասխան լիազոր մարմինների ներկայացուցիչները իրենք են փաստում, որ չկան տարատարիք խմբերին համապատասխանող ծրագրեր, իսկ յուրաքանչյուր տարիքային խմբի հետ առանձին աշխատանքը այնքան էլ իրատեսական չէ: ՀՀ նախադպրոցական ուսումնական հաստատություններից ստացված տեղեկատվության համաձայն 2019 թվականի սեպտեմբերի 1-ի դրությամբ տարատարիք խմբեր ունեն 700 մանկապարտեզների 280-ը (40%), իսկ տարատարիք խմբերում տարիքային խմբերի թիվը 3 և ավելի է՝ 109-ում (16%): ԿՏՄ 2020 թվականի ստուգումների ծրագրում ներառված 12 քաղաքային նախադպրոցական ուսումնական հաստատություններում առկա են տարատարիք խմբեր: Այս հաստատություններում անհրաժեշտ է փաստաթղթային ստուգման հետ մեկտեղ իրականացնել նաև պարապմունքների լսումներ (համապատասխան մասնագետների հետ համատեղ) առկա խնդիրները վերհանելու նպատակով:</p>	<p>Տեսչական մարմնի 2020թ. ստուգումների տարեկան ծրագրում ներառված <u>բոլոր</u> ՆՈՒՅ-երը ունեն ուսումնադաստիարակչական գործունեության գնահատման համապատասխան կարողություններ</p> <p><u>Թիրախ</u>՝ Մանկապարտեզի ուսումնադաստիարակչական գործունեությունը թե տնօրենի, թե մեթոդիստի և մանկավարժական աշխատողների պաշտոնեական պարտականությունների մասով:</p> <p><u>Յիմնավորում</u>՝ Միայն կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների խախտումների արձանագրումը ստուգաթերթերի միջոցով հնարավորություն չի տալիս գնահատել նախադպրոցական ուսումնական հաստատության ուսումնադաստիարակչական գործունեությունը: Ուստի ստուգումների ընթացքում <u>նաև</u> ուսումնադաստիարակչական գործունեության ձևաթղթի կիրառումը հնարավորություն կտա ԿՏՄ-ին, ինչպես նաև հաստատությանը գնահատել մանկապարտեզի ուժեղ կամ թույլ կողմերը:</p>
ՈԼՈՐՏԸ	Միջանկյալ արդյունք 1	Միջանկյալ արդյունք 2

<p>ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ</p>	<p>Տեսչական մարմնի 2020թ. ստուգումների տարեկան ծրագրում ներառված քաղաքային (այդ թվում՝ ավագ) և դպրոցներն ունեն համապատասխան պատկերացում ավելի որակյալ ուսուցում և ուսումնառություն իրականացնելու ուղղությամբ</p> <p>Թիրախ՝ մնացորդային գիտելիքների մակարդակ «Մաթեմատիկա» և «Ինֆորմատիկա» առարկաներից, դպրոցի գործունեության համապատասխանություն կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջներին, սովորողների, ծնողների կողմից կրթական գործընթացի գնահատում:</p> <p>Հիմնավորում՝ Սովորողների մոտ մնացորդային գիտելիքների (մնացորդային գիտելիքներ են համարվում այն գիտելիքները, կարողություններն ու հմտությունները, որոնք պահպանվել են սովորողի մոտ նախորդ դասարանի կրթական ծրագիրը հաջողությամբ հաղթահարելուց հետո) մակարդակը ուսումնական հաստատություններում ստուգվում են նախորդ դասարանի անցած կյուլթին համապատասխան: Կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների կիրարկման նկատմամբ վերահսկողության միջոցով ԿՏՄ-ն նպաստում է դպրոցներում կրթության որակի երաշխավորման մեխանիզմների առկայությանը, ինչպես նաև խթանում է կրթության որակի բարելավմանը:</p>	<p>Տեսչական մարմնի 2020թ. ստուգումների տարեկան ծրագրում ներառված ըլուրդ դպրոցներն ունեն կրթական գործընթացի գնահատման համապատասխան կարողություններ</p> <p>Թիրախ՝ Դպրոցի կրթական գործունեությունը՝ թե տնօրենի, մանկավարժական աշխատողների պաշտոնական պարտականությունների կատարման, թե սովորողների ուսուցման և ուսումնառության մասով:</p> <p>Հիմնավորում՝ Միայն կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների խախտումների արձանագրումը ստուգաթերթերի միջոցով հնարավորություն է չի տալիս գնահատել դպրոցի կրթական գործունեությունը: Ուստի ստուգումների ընթացքում նաև կրթական գործընթացի գնահատման ձևաթղթի կիրառումը հնարավորություն կտա ԿՏՄ-ին, ինչպես նաև հաստատությանը գնահատել դպրոցի ուժեղ կամ թույլ կողմերը:</p>
------------------------------	--	---

<p>ՆԱԽՆԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱԿԱՆ ԴԱՔՅԱԿՍԿ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ</p>	<p>Տեսչական մարմնի 2020թ. ստուգումների տարեկան ծրագրում ներառված ուսումնական հաստատություններն ունեն համապատասխան կարողություններ առավել արդյունավետ կառավարում և կրթական գործընթաց իրականացնելու համար</p> <p><u>Թիրախ</u>՝ համապատասխան որակավորում և պատրաստվածություն ունեցող մանկավարժական և վարչական համակազմ, որակյալ ուսուցման ապահովում՝ մեթոդների, ուսումնական պլանների, կրթական չափորոշիչների և ծրագրերի միջոցով, վերապատրաստումներ խորհրդի և տնօրենի գործառույթների որակի ապահովման գործընթացում</p> <p><u>Հիմնավորում</u>՝ Մանկավարժական և վարչական աշխատողների՝ համապատասխան որակավորում ունենալը ենթադրում է, որ անձի մասնագիտական գիտելիքները, կարողություններն ու հմտությունները հնարավորություն կտան սահմանված կարգով իրականացնել պաշտոնի նկարագրով նախատեսված պարտականությունները:</p> <p>Կառավարման խորհրդի և գործադիր մարմնի՝ կրթության բնագավառը կարգավորող օրենսդրությանը համապատասխան գործունեությունը կապահովի արդյունավետ կառավարում և ղեկավարում:</p>
---	--

V. Նախադպրոցական կրթության ոլորտի խնդիրներից բխող գործողություններն ըստ միջանկյալ արդյունքների

Ստորև ներկայացված են **Նախադպրոցական կրթության ոլորտի խնդիրներից բխող գործողությունները**, թիրախներն ըստ փաստացի տվյալների և ակնկալվող արդյունքները (Միջանկյալ արդյունք 1, Միջանկյալ արդյունք 2)։

ՆԱԽԱԴՂՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Միջանկյալ արդյունք 1

Տեսչական մարմնի 2020թ. ստուգումների տարեկան ծրագրում ներառված տարատարիք խմբեր ունեցող ՆՈՒՅ-երն ունեն համապատասխան պատկերացում երեխայի տարիքային խմբին համապատասխան ծրագրային պահանջները ապահովելու ուղղությամբ

Թիրախ` Մանկապարտեզների խմբերում ընդգրկված երեխաների համար, որոնց տարիքները չեն համապատասխանում տվյալ տարիքային խմբին, չափորոշիչ համապատասխան որակական պահանջները չեն իրականացվում:

Միջանկյալ արդյունք 2

Տեսչական մարմնի 2020թ. ստուգումների տարեկան ծրագրում ներառված ՆՈՒՅ-երը ունեն ուսումնադաստիարակչական գործունեության գնահատման համապատասխան կարողություններ

Թիրախ` Մանկապարտեզի ուսումնադաստիարակչական գործունեությունը թե տնօրենի, թե մեթոդիստի և մանկավարժական աշխատողների պաշտոնական պարտականությունների մասով:

Միջանկյալ արդյունք 1. Տեսչական մարմնի 2020թ. ստուգումների տարեկան ծրագրում ներառված տարատարիք խմբեր ունեցող ՆՈՒՅ-երն ունեն համապատասխան պատկերացում երեխայի տարիքային խմբին համապատասխան միջավայր ստեղծելու և ապահովելու ուղղությամբ

Գործողություն	Գործընթացի ցուցանիշ (ելակետ, թիրախ)	Ժամանակահատվածը	Պատասխանատու կատարող	Ակնկալվող արդյունք
<p>1. ՆՈՒՅ-երում կրթադաստիարակչական գործունեության գնահատում հրականացնող մասնագետների բազայի ստեղծում՝ ըստ նախապես սահմանված/համաձայնեցված չափանիշների</p>	<p>Մասնագետների բազայի բացակայություն</p>	<p>Հունվար-փետրվար</p>	<p>ՀՎ³</p>	<p>Մասնագետների տվյալների բազա</p>
<p>2. ՆՈՒՅ-երի կրթադաստիարակչական գործունեության գնահատում հրականացնող մասնագետների վերապատրաստում</p>	<p>Մասնագետները ծանոթ չեն ՆՈՒՅ-երի կրթադաստիարակչական գործունեության գնահատման ձևաթղթին</p>	<p>II եռամսյակ</p>	<p>Ստորաբաժանման ղեկավարներ, մասնագետներ</p>	<p>Մասնագետները ամբողջովին տիրապետում են ՆՈՒՅ-երի պարապունքների լսման ԿՏՄ գործիքակազմի պահանջներին</p>
<p>3. Տարատարիք խմբեր ունեցող քաղաքային ՆՈՒՅ-երում հրականացվող ստուգումների ընթացքում կրթադաստիարակչական գործունեության գնահատում</p>	<p>Չափորոշչի համապատասխան որակական պահանջները չեն հրականացվում</p>	<p>II կիսամյակ</p>	<p>ՀՎ</p>	<p>Առաջարկություններ, վեր հանված ինդիկորներ (առկայության դեպքում), գրություններ, հաշվետվություններ</p>

Միջանկյալ արդյունք 2. Տեսչական մարմնի 2020թ. ստուգումների տարեկան ծրագրում ներառված ՆՈՒՅ-երը ունեն ուսումնադաստիարակչական գործունեության գնահատման համապատասխան կարողություններ

Գործողություն	Գործընթացի ցուցանիշ (ելակետ, թիրախ)	Ժամանակահատվածը	Պատասխանատու կատարող ----- Համակատարող	Ակնկալվող արդյունք
1. Ստուգումներ ՆՈՒՀ-երում	Վերագնահատված ռիսկերի բազա, ռիսկերի գնահատման մեթոդաբանություն	Ըստ ստուգումների տարեկան ծրագրի	ՀԿ ----- ԻԱՓԿ	1) Ակտ, կարգադրագիր (հանձնարարականներ), գրություններ լիազորված մարմիններին. 2) լրացված ստուգաթերթեր և ուսումնադաստիարակչական գնահատման ձևաթղթեր 3) Հաստատություններից ստացված հանձնարարականների կատարման վերաբերյալ գրություններ. 4) Կատարված հանձնարարականների տոկոսային թվի աճ նախորդ տարվա համեմատ. 5) Լիազոր մարմիններից ստացված գրություններ. 5) Ըստ անհրաժեշտության՝ կիրառված պատասխանատվության միջոցներ
2. Վերահսկողություն և ՀՀ Շիրակի մարզի Անի, ՀՀ Լոռու մարզի Ալավերդու համայնքապետարանների կրթության հարցերով զբաղվող ստորաբաժանումներում	Ամբողջական տվյալների ստացում	II-III եռամսյակներ	ՀԿ ----- ԻԱՓԿ ՌԳՄՊԿԳԿ	Տեղեկանք կամ հաշվետվություն, լրացված ձևաթղթեր, գրությունների ներկայացում համապատասխան մարմիններին (համայնքապետեր, ՀՀ ԿԳՄՍ նախարարություն, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն), ըստ անհրաժեշտության թարմացված ռիսկերի բազա
3. Ռիսկերի գնահատում	Բարձր ռիսկային խմբի թվով 25 ՆՈՒՀ, Միջին ռիսկային խմբի թվով 9 ՆՈՒՀ, Ցածր ռիսկային խմբի թվով 2 ՆՈՒՀ	Ստուգման ավարտից հետո՝ 10-օրյա ժամկետում	ՌԳՄՊԿԳԿ	1) Ռիսկերի վերագնահատում՝ թարմացված ռիսկերի գնահատման տվյալների բազա 2) Ստուգումների արդյունքների, վերլուծությունների ներկայացում եռամսյակային, տարեկան հաշվետվություններում, ըստ անհրաժեշտության՝ առաջարկությունների ներկայացում համապատասխան մարմիններին 3) Ոլորտային ռիսկերի վերագնահատում նոր ուսումնական տարվա սկզբում (սեպտեմբեր-հոկտեմբեր)
4. Հետադարձ կապ	ՆՈՒՀ-երից ստացված կատարողականների	Յուրաքանչյուր եռամսյակ	ՌԳՄՊԿԳԿ	1) Ըստ անհրաժեշտության վերագնահատված ռիսկայնությամբ ՆՈՒՀ-եր.

	համապատասխանություն տրված հանձնարարականների հետ			2) Համադրման արդյունքների ներառում էռամայակային, տարեկան հաշվետվություններում. 3) Ըստ անհրաժեշտության գրություններ համապատասխան մարմիններ (համայնքապետեր, ՀՀ ԿԳՄՍ նախարարություն, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն)
5. Դիմում-բողոքներին արձագանքում և արդյունքների ամփոփում	ՆՈՒՀ-երի վերաբերյալ դիմում-բողոքի առկայություն	Ըստ անհրաժեշտության	ՀԿ ՌԳՄՊԿԿ ԻԱՓԿ	Ուսումնասիրություն կամ ստուգում (ըստ անհրաժեշտության ակտ, կարգադրագիր), տեղեկանք, գրություններ: Հաշվետվության ներկայացում առնվազն յուրաքանչյուր կիսամյակի ավարտից հետո 20 օրյա ժամկետում (դիմում-բողոքների վերաբերյալ քանակական տվյալների ներկայացում ըստ տարիների, ամիսների: Անդրադարձ բարձրացված հարցերի բնույթներին, ԿՏՄ ձեռնարկած միջոցառումներին, լիազոր մարմինների կողմից իրականացրած պատասխանատվության միջոցներին):

VI. Հանրակրթության (միջնակարգ կրթության) ոլորտի խնդիրներից բխող գործողություններն ըստ միջանկյալ արդյունքների

Ստորև ներկայացված են Հանրակրթության (միջնակարգ կրթության) ոլորտի խնդիրներից բխող գործողությունները, թիրախներն ըստ փաստացի տվյալների և ակնկալվող արդյունքները (Միջանկյալ արդյունք 1, Միջանկյալ արդյունք 2).

ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ	
Միջանկյալ արդյունք 1	Միջանկյալ արդյունք 2

Տեսչական մարմնի 2020թ. ստուգումների տարեկան ծրագրում ներառված ավագ և քաղաքային դպրոցներն ունեն համապատասխան պատկերացում ավելի որակյալ ուսուցում և ուսումնառություն իրականացնելու ուղղությամբ

Թիրախ՝ մնացորդային գիտելիքների մակարդակ մաթեմատիկա և ինֆորմատիկա առարկաներից, դպրոցի գործունեության համապատասխանություն կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջներին, սովորողների, ծնողների կողմից կրթական գործընթացի գնահատում:

Տեսչական մարմնի 2020թ. ստուգումների տարեկան ծրագրում ներառված դպրոցներն ունեն կրթական գործընթացի գնահատման համապատասխան կարողություններ

Թիրախ՝ Դպրոցի կրթական գործունեությունը՝ թե՛ տնօրենի և մանկավարժական աշխատողների պաշտոնական պարտականությունների կատարման, թե՛ սովորողների ուսուցման և ուսումնառության մասով:

Միջանկյալ արդյունք 1. Տեսչական մարմնի 2020թ. ստուգումների տարեկան ծրագրում ներառված ավագ և քաղաքային դպրոցներն ունեն համապատասխան պատկերացում ավելի որակյալ ուսուցում և ուսումնառություն իրականացնելու ուղղությամբ				
Գործողություն	Գործընթացի ցուցանիշ (ելակետ, թիրախ)	Ժամանակահատվածը	Պատասխանատու կատարող ----- Համակատարող	Ակնկալվող արդյունք
1. Դասալսող մասնագետների բազայի ստեղծում ըստ նախապես սահմանված/ համաձայնեցված չափանիշների	Մասնագետների բազայի բացակայություն	Հունվար-փետրվար	ՀԿ	Մասնագետների բազա
2. Դասալսող մասնագետների վերապատրաստում (Երևան, Վանաձոր, Գյումրի, Աբովյան, Հրազդան քաղաքներ)	ԿՏՄ-ն դասալսման նոր գործիքակազմ ունի, մասնագետները դրան ծանոթ չեն	II եռամսյակ	Ստորաբաժանման ղեկավարներ, մասնագետներ	Մասնագետները ամբողջապես տիրապետում են դասալսման ԿՏՄ նոր գործիքակազմին

<p>3. Սովորողների մնացորդային գիտելիքների մակարդակի ստուգման համար անհրաժեշտ գրավոր աշխատանքների բազայի վերագինում</p>	<p>«Ինֆորմատիկա» առարկայից գործնական առաջադրանքների բազայի բացակայություն, «Մաթեմատիկա» առարկայից գրավոր առաջադրանքների բազայի թարմացման անհրաժեշտություն</p>	<p>Հունվար-փետրվար</p>	<p>ՌԳՍՊԿԳԿ ----- ԳԹԿ</p>	<p>Թարմացված գրավոր առաջադրանքների բազա</p>
<p>4. Քաղաքային 14 դպրոցներում (այդ՝ թվում ավագ) իրականացվելիք ստուգումների ընթացքում մասնագետների կողմից ինֆորմատիկայի և մաթեմատիկայի դասալսումների իրականացում</p>	<p>«Ինֆորմատիկա» և «Մաթեմատիկա» առարկաների դրվածքը</p>	<p>II կիսամյակ</p>	<p>ՀԿ</p>	<p>Առաջարկություններ, խնդիրների առկայության դեպքում գրություններ համապատասխան մարմիններ, հաշվետվություններ յուրաքանչյուր դպրոցի մասով, մաթեմատիկայի և ինֆորմատիկայի դրվածքի վերաբերյալ ամփոփ հաշվետվություն</p>

<p>Միջանկյալ արդյունք 2. Տեսչական մարմնի 2020թ. ստուգումների տարեկան ծրագրում ներառված դպրոցներն ունեն կրթական գործընթացի գնահատման համապատասխան կարողություններ</p>				
<p>Գործողություն</p>	<p>Գործընթացի ցուցանիշ (ելակետ, թիրախ)</p>	<p>Ժամանակահատվածը</p>	<p>Պատասխանատու կատարող ----- Համակատարող</p>	<p>Ակնկալվող արդյունք</p>

<p>1. Ստուգումներ ՀՀ դպրոցներում</p>	<p>Վերազնահատված նիսկերի բազա, նիսկերի գնահատման մեթոդաբանություն</p>	<p>Ըստ ստուգումներ ի տարեկան ծրագրի</p>	<p>ՀՎ ----- ԻԱՓՎ</p>	<p>1) Ակտ, կարգադրագիր (հանձնարարականներ), գրություններ լիազորված մարմիններին. 2) Լրացված ստուգաթերթեր և կրթական գործընթացի գնահատման ձևաթղթեր, «Հայոց լեզու», «Ինֆորմատիկա» և «Մաթեմատիկա» առարկաներից տրված գրավոր աշխատանքների արդյունքներ. 3) Հաստատություններից ստացված հանձնարարականների կատարման վերաբերյալ գրություններ. 4) Կատարված հանձնարարականների թվի աճ նախորդ տարվա համեմատ. 5) Լիազոր մարմիններից ստացված գրություններ. 6) Ըստ անհրաժեշտության՝ կիրառված պատասխանատվության միջոցներ. 7) 5 դպրոցների զարգացման ծրագրերի գնահատում՝ ըստ ձևաթղթի</p>
<p>2. Վերահսկողություն ՀՀ Արարատի մարզպետարանի աշխատակազմի կրթության հարցերով զբաղվող ստորաբաժանումում</p>	<p>Ամբողջական տվյալների ստացում</p>	<p>II-III եռամսյակներ</p>	<p>ՀՎ ----- ՌԳՄՊԿԳՎ</p>	<p>Տեղեկանք կամ հաշվետվություն, լրացված ձևաթղթեր, գրությունների ներկայացում համապատասխան մարմիններին (մարզպետ, ՀՀ ԿԳՄՍ նախարարություն, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն), ըստ անհրաժեշտության թարմացված նիսկերի բազա</p>
<p>3. Ռիսկերի գնահատում</p>	<p>Բարձր ռիսկային խմբի 28 դպրոց, Միջին ռիսկային խմբի 10 դպրոց, Ցածր ռիսկային խմբի 2 դպրոց</p>	<p>Ստուգման ավարտից հետո՝ 10-օրյա ժամկետում</p>	<p>ՌԳՄՊԿԳՎ</p>	<p>1) Ռիսկերի վերազնահատում՝ թարմացված նիսկերի գնահատման տվյալների բազա 2) Ստուգումների արդյունքների, վերլուծությունների ներկայացում եռամսյակային, տարեկան հաշվետվություններում, ըստ անհրաժեշտության՝ առաջարկությունների ներկայացում համապատասխան մարմիններին 3) Ոլորտային ռիսկերի վերազնահատում՝ նոր ուսումնական տարվա սկզբում (սեպտեմբեր-հոկտեմբեր)</p>
<p>4. Հետադարձ կապ</p>	<p>Դպրոցներից ստացված կատարողականների համապատասխանություն տրված հանձնարարականների հետ</p>	<p>Յուրաքանչյուր եռամսյակ</p>	<p>ՌԳՄՊԿԳՎ</p>	<p>1) Ըստ անհրաժեշտության վերազնահատված ռիսկայնությամբ դպրոցներ. 2) Համադրման արդյունքների ներառում եռամսյակային, տարեկան հաշվետվություններում. 3) Ըստ անհրաժեշտության գրությունների ներկայացում համապատասխան մարմիններ (համայնքապետեր, ՀՀ ԿԳՄՍ նախարարություն, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն)</p>

<p>5. Դիմում բողոքներին արձագանքում և արդյունքների ամփոփում</p>	<p>Դպրոցների վերաբերյալ դիմում-բողոքի առկայություն</p>	<p>Ըստ անհրաժեշտության</p>	<p>ՀՎ ՌԳՄՊՎԳՎ ԻԱՓՎ</p>	<p>Ուսումնասիրություն կամ ստուգում (ըստ անհրաժեշտության ակտ, կարգադրագիր), տեղեկանք, գրություններ: Հաշվետվության ներկայացում առնվազն յուրաքանչյուր կիսամյակի ավարտից հետո 20 օրյա ժամկետում (դիմում-բողոքների վերաբերյալ քանակական տվյալների ներկայացում ըստ տարիների, ամիսների: Անդրադարձ բարձրացված հարցերի բնույթներին, ԿՏՄ ձեռնարկած միջոցառումներին, լիազոր մարմինների կողմից իրականացրած պատասխանատվության միջոցներին):</p>
--	--	----------------------------	--------------------------------	---

VII. Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտի խնդիրներից բխող գործողություններն ըստ թիրախների

Ստորև ներկայացված են Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտների խնդիրներից բխող գործողությունները, թիրախները՝ փաստացի տվյալներով, ակնկալվող արդյունքները

ՆԱԽՆԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Միջանկյալ արդյունք

Տեսչական մարմնի 2020թ. ստուգումների տարեկան ծրագրում ներառված ուսումնական հաստատություններն ունեն համապատասխան կարողություններ առավել արդյունավետ կառավարում և կրթական գործընթաց իրականացնելու համար

***Թիրախ**` համապատասխան որակավորում և պատրաստվածություն ունեցող մանկավարժական և վարչական համակազմ, որակյալ ուսուցման ապահովում` մեթոդների, ուսումնական պլանների, կրթական չափորոշիչների և ծրագրերի միջոցով, վերապատրաստումներ խորհրդի և տնօրենի գործառույթների որակի ապահովման գործընթացում*

Միջանկյալ արդյունք` Տեսչական մարմնի 2020թ. ստուգումների տարեկան ծրագրում ներառված ուսումնական հաստատություններն ունեն համապատասխան կարողություններ առավել արդյունավետ կառավարում և կրթական գործընթաց իրականացնելու համար

Գործողություն	Գործընթացի ցուցանիշ (ելակետ, թիրախ)	Ժամանակահատվածը	Պատասխանատու կատարող ----- Համակատարող	Ակնկալվող արդյունք
---------------	--	-----------------	--	--------------------

<p>1. Կառավարման խորհրդի գործունեության մշտադիտարկման ձևաթղթի մշակում</p>	<p>Մշտադիտարկման ձևաթղթի բացակայություն</p>	<p>I եռամսյակ</p>	<p>ՆՄՄԿՎ</p>	<p>Մշտադիտարկման ձևաթղթի նախագիծ</p>
<p>2. Կառավարման խորհրդի գործունեության մշտադիտարկման ձևաթղթի փորձարկում</p>	<p>Փորձարկում 3 ուսումնական հաստատություններում</p>	<p>II եռամսյակ</p>	<p>ՆՄՄԿՎ</p>	<p>Լրամշակված ձևաթուղթ</p>
<p>3. Ստուգումներ ՀՀ նախնական մասնագիտական և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում</p>	<p>Ռիսկերի գնահատման բազա՝ 1) ուսումնական հաստատության սովորողների թիվ 2) ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների շարժ 3) ուսումնական հաստատությունից հանրակրթական ուսումնական հաստատություն տեղափոխված սովորողների թիվ 4) ուսումնական հաստատության կողմից պետական լիազորված մարմնի հատկացրած տեղերում 3 տարի անընդմեջ ընդունելություն չիրականացնելը</p>	<p>Համաձայն ստուգումների ժամանակացույցի</p>	<p>ՆՄՄԿՎ ----- ԻԱՓՎ</p>	<p>1) Ակտ, կարգադրագիր, գրություններ լիազորված մարմիններին 2) Հաստատություններից ստացված կատարողականների և հանձնարարականների համադրման արդյունքում առնվազն 50% հանձնարարականների կատարում 3) Լիազոր մարմիններից ստացված գրություններ 4) Ըստ անհրաժեշտության՝ կիրառված պատասխանատվության միջոցներ</p>
<p>4. Ռիսկերի գնահատում</p>	<p>Բարձր ռիսկային խմբի թվով 20 հաստատություններ, միջին ռիսկային խմբի թվով 7 հաստատություններ, ցածր ռիսկային խմբի 1 հաստատություն</p>	<p>Ստուգման ավարտից հետո 10-օրյա ժամկետում</p>	<p>ՌԳՍՊԿՎ</p>	<p>1) Ռիսկերի վերագնահատում՝ թարմացված ռիսկերի գնահատման տվյալների բազա 2) Վերլուծությունների ներկայացում եռամսյակային կամ տարեկան հաշվետվությունում, առաջարկությունների ներկայացում համապատասխան մարմիններին</p>

<p>5. Հետադարձ կապ (տրված հանձնարարականի և ներկայացված կատարողականի համադրում՝ տեսչական մարմնում կամ տնտեսավարող սուբյեկտում)</p>	<p>Ուսումնական հաստատություններից ստացված կատարողականների համապատասխանություն տրված հանձնարարականների հետ</p>	<p>Յուրաքանչյուր եռամսյակ</p>	<p>ՆՄՄԿԿ, ՌԳՄՊԿԳԿ</p>	<p>1) Ըստ անհրաժեշտության վերազնահատված ռիսկայնությամբ ուսումնական հաստատություններ 2) Համադրման արդյունքների ներառում եռամսյակային, տարեկան հաշվետվություններում 3) Ըստ անհրաժեշտության գրությունների ներկայացում համապատասխան մարմիններ (ՀՀ ԿԳՄՍ Նախարարություն, պատասխանատվության միջոցների կիրառման առաջարկությունների, անհրաժեշտ. դեպքում՝ կրթության բնագավառի իրավական ակտերում լրացումների և փոփոխությունների վերաբերյալ առաջարկների ներկայացում)</p>
<p>6. Դիմում-բողոքներին արձագանքում և արդյունքների ամփոփում</p>	<p>Նախնական մասնագիտական և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների վերաբերյալ դիմում-բողոքի առկայություն</p>	<p>Ըստ անհրաժեշտության</p>	<p>ՆՄՄԿԿ ----- ՌԳՄՊԿԳԿ ԻԱՓԿ</p>	<p>Հաշվետվության ներկայացում առնվազն յուրաքանչյուր կիսամյակի ավարտից հետո 20 օրյա ժամկետում (դիմում-բողոքների վերաբերյալ քանակական տվյալների ներկայացում ըստ տարիների, ամիսների: Անդրադարձ բարձրացված հարցերի բնույթներին, ԿՏՄ ձեռնարկած միջոցառումներին, լիազոր մարմինների կողմից իրականացրած պատասխանատվության միջոցներին):</p>

VIII. Հաշվետվողականություն

<p>Հաշվետվողականություն</p>
<p>Միջանկյալ արդյունք</p>

Կրթության ոլորտի հաշվետվողականության ավելի բարձր մակարդակ ոլորտի վերահսկողությունը կարգավորող օրենսդրական հիմքերի հստակեցման միջոցով

Թիրախ՝ ՀՀ կրթության բնագավառի վերահսկողությունը կարգավորող ՀՀ օրենսդրության առկա բացերի հստակեցման անհրաժեշտություն, քանի որ «Տեսչական մարմինների մասին», «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքները հնարավորություն չեն տալիս ամբողջությամբ և արդյունավետ իրականացնել կրթության ոլորտի վերահսկողական գործառնությունները՝ հաշվի առնելով ոլորտի առանձնահատկությունները:

Միջանկյալ արդյունք՝ Կրթության ոլորտի հաշվետվողականության ավելի բարձր մակարդակ ոլորտի վերահսկողությունը կարգավորող օրենսդրական հիմքերի հստակեցման միջոցով

Գործողություն	Գործընթացի ցուցանիշ (Ելակետ, թիրախ)	Ժամանակահատված	Պատասխանատու և կատարող ----- Համակատարող	Ակնկալվող արդյունք
<p>1. Զննարկումների շարք շահագրգիռ բոլոր կողմերի հետ (ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ, ԿԳՄՄՆ⁸)</p>	<p>«Տեսչական մարմինների մասին», «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքներ, «Կրթության բնագավառի պետական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի նախագիծ</p>	<p>I կիսամյակ</p>	<p>ԻԱՓԿ ----- ՀԿ ՆՄՄԿԿ ՀՏԱԲ ՌԳՍՊԿԳԿ</p>	<p>Եզրակացություններ, գրություններ, առաջարկություններ, նախագիծ</p>
<p>2. «Կրթության բնագավառի պետական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի հայեցակարգի և օրենքի նախագծի մշակման հետ կապված առաջարկությունների ներկայացում և համաձայնեցում շահագրգիռ բոլոր կողմերի հետ (ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ, ԿԳՄՄՆ)</p>				

IX. Որակի ապահովման ստորաբաժանման 2020 թվականի գործունեության միջոցառումների ծրագիր

N	Միջոցառման անվանումը	Աշխատանքի նպատակը	Կատարողը	Համակատարող ը	Ժամկետը
1	2	3	4	5	6

1.	Ներքին կարգապահական կանոնների և էթիկայի կանոնների պահպանման վերաբերյալ վերլուծության ներկայացում խորհուրդ	«Տեսչական մարմինների որակի ապահովման ստորաբաժանումների կազմակերպման և գործունեության կարգի» 12-րդ կետի պահանջի կատարում	ՈԱԲ	-	Յուրաքանչյուր կիսամյակ
2.	Տեսչական մարմնի, նրա ծառայողների գործողությունների, կամ անգործության, կամ նրա կողմից ընդունված իրավական ակտերի վերաբերյալ ստացված բողոքների ուսումնասիրում, թերությունների վերհանում և դրանց հիման վրա կատարելագործմանն ուղղված առաջարկությունների մշակում և ներկայացում խորհուրդ	«Տեսչական մարմինների որակի ապահովման ստորաբաժանումների կազմակերպման և գործունեության կարգի» 14-րդ կետի պահանջի կատարում	ՈԱԲ	-	Յուրաքանչյուր կիսամյակ
3.	ԿՏՄ կայքէջում վերլուծությունների հրապարակում 1) ԿՏՄ ծառայողների տրամադրած խորհրդատվության օգտակարության արձագանքների 2) ստուգաթերթերի՝ որպես պահանջներին համապատասխանությանը նպաստող գործիքի արդյունավետության վերաբերյալ արձագանքների	«Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջների կատարում	ՈԱԲ	ՀՏԱԲ	Պարբերաբար
4.	Ոփսկերի բացահայտման նպատակով ԿՏՄ ստորաբաժանումներում ուսումնասիրությունների իրականացում և ԿՏՄ գործունեության արդյունավետության բարձրացման վերաբերյալ առաջարկություններ ներառող հաշվետվությունների կազմում	«Տեսչական մարմինների որակի ապահովման ստորաբաժանումների կազմակերպման և գործունեության կարգի» 6-րդ, 16-րդ, 17-րդ կետերի պահանջների կատարում	ՈԱԲ	-	Յուրաքանչյուր կիսամյակ
5.	Տեսչական մարմնի գործունեության կատարողականի գնահատման չափորոշիչների հաշվարկում, նորկայացում խորհուրդ, ինչպես նաև հրապարակում տեսչական մարմնի պաշտոնական կայքէջում և հանրության համար հասանելի այլ միջոցներով	«Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ, 5-րդ մասերի պահանջների կատարում	ՈԱԲ	ՀՏԱԲ	Յուրաքանչյուր եռամյակ

X. Կանխարգելիչ միջոցառումների տարեկան ժամանակացույց

N	Գործողություն	Արդյունք	Ժամկետ	Կատարող/ համակատարող	Փնտհատման չափանիշ
1.	Ըստ տեսչական մարմնի 2020թ. գործունեության տարեկան ծրագրի՝ կիսամյակային պլանների կազմում	Տեսչական մարմնի գործունեության՝ ՉԼՄ-ների և հանրության հետ կապերի տեսանկյունից հստակեցում և համակարգում	1-ին կիսամյակի պլանը՝ տեսչական մարմնի 2020թ. ծրագրի հաստատումից հետո 10-օրյա ժամկետում, 2-րդը՝ կիսամյակին նախորդող ամսվա մինչև 20-ը	ՀՏԱԲ	Գործողությունների պլան և ժամանակացույց
2.	Ըստ տեսչական մարմնի ստուգումների տարեկան ծրագրի՝ կրթության հարցերով ՀԿ-ների և ուսումնական հաստատությունների տնօրենների հետ հանդիպում-քննարկումների կազմակերպում՝ պլանային և ըստ անհրաժեշտության՝ մայրաքաղաքում և մարզերում	Հանրության՝ իրենց իրավունքների և պարտականությունների իրազեկվածության մակարդակի բարձրացում, հնարավոր խախտումների կանխարգելում և առկա խնդիրների որոշակի կարգավորում	Տարվա ընթացքում	ՀՏԱԲ, ԻԱՓՎ, ՀՎ, ՆՄՄԿՎ	Պլանային 3 հանդիպում՝ դրանց լուսաբանում տեսչական մարմնի պաշտոնական կայքում և ՉԼՄ-ներում
3.	Ըստ տեսչական մարմնի ստուգումների տարեկան ծրագրի՝ ստուգումների նպատակների, խնդիրների և արդյունքների լուսաբանում՝ տարբեր ձևաչափերով	Հանրության իրազեկվածության և տեղեկացվածության մակարդակի բարձրացում իրենց իրավունքների մասին, հնարավոր խախտումների կանխարգելում	Տարվա ընթացքում	ՀՏԱԲ	<ul style="list-style-type: none"> - Եռամսյակային հաշվետվություններ, որոնք հրապարակվել և տարածվել են ոչ միայն տեսչական մարմնի կայքում և սոցիալական էջերում, այլև ՉԼՄ-ներում. - հարցազրույցներ տեսչական մարմնի ղեկավար կազմի հետ՝ տարբեր թեմաներով. - տեսչական մարմնի ղեկավարի մամուլի ասուլիս՝ առնվազն տարեկան երկու անգամ. - այլ միջոցառումներ՝ ըստ անհրաժեշտության
4.	Տեսչական մարմնի նոր կայքի ստեղծում, նաև վերազինում երկու լեզուներով	Տեսչական մարմնի անհատականացման միջոցների ապահովում և ճանաչելիության խթանում հանրության շրջանում	I, II, III եռամսյակներ	ՀՏԱԲ	Տեսչական մարմնի պաշտոնական կայքի, ՖԲ էջի տարածում սոցիալական էջերի և ՉԼՄ-ների միջոցով

5.	Տեսչական մարմնի կայքի և սոցիալական ցանցերի էջերի բովանդակային սպասարկում և թարմացում	Տեսչական մարմնի գործունեության թափանցիկության ապահովում, հանրության հնարավորինս լայն շրջանակի իրազեկում ժամանակակից մեդիա միջոցների կիրառմամբ	Տարվա ընթացքում	ՀՏԱԲ	Կայքի և սոցիալական ցանցերի բովանդակության պարբերական թարմացում, կայքում ներկայացվող նյութերի հասանելիությունն ապահովելու նպատակով համապատասխան հաշվետվությունների, աշխատանքային ծրագրերի, ստուգումների արդյունքների մասին տեղեկանքների, ստուգումների և գործողությունների ժամանակացույցի բովանդակության մշակում, տեղադրում և համակարգում
6.	Թեժ գծի հեռախոսազանգերի, տեղեկատվական թերթիկների միջոցով ստացված դիմում-բողոքների հիմնական թեմաների վերաբերյալ՝ խորհրդատվական նյութերի պատրաստում և ուսումնական հաստատություններում խորհրդատվությունների կազմակերպում	ՉԼՍ-ների ներկայացուցիչներին՝ ոլորտը կարգավորող իրավական ակտերի վերաբերյալ տեղեկատվություն, տեսչական մարմնի հանդեպ վստահության ձևավորում	Տարվա ընթացքում	ՀՏԱԲ, ՀԿ, ՆՄՄԿԿ	Տեղեկատվական թերթիկների տրամադրում հանրության լայն շրջանակին, ամենահաճախ բարձրացվող խնդիրների վերաբերյալ հաշվետվություն՝ թեժ գծով ստացվող հարցումների և հանդիպումների մասին
7.	Հանդիպում-քննարկումներ, ՀԿ-ների և ՉԼՍ-ների մասնակցությամբ՝ պլանային և ըստ անհրաժեշտության	Հանրային առավել լայն տեղեկացվածության ապահովում տեսչական մարմնի գործունեության վերաբերյալ, վստահության բարձրացում մարմնի հանդեպ	III և IV եռամսյակներ	ՀՏԱԲ, ՀԿ, ՆՄՄԿԿ	Պլանային 3 հանդիպում
8.	Տեսչական մարմնի մասին մեդիա նյութերի արխիվի ձևավորում	Խնդիրների վերհանում, քարոզչական նպատակաուղղում և իրազեկում՝ ՉԼՍ-ներով առավել շատ անդրադարձ գտած արխիվացված նյութերի, հաշվետվությունների միջոցով	Տարվա ընթացքում	ՀՏԱԲ	Մեդիա նյութերի արխիվ

9.	Իրազեկում-հանդիպումների կազմակերպում նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ուսանողների և ավագ դպրոցի աշակերտների հետ՝ երկու պլանային հանդիպում	Հանրության առավել ակտիվ խավի իրազեկում, իրավագիտակցության բարձրացում, ոլորտում առկա խնդիրների վերաբերյալ տեղեկատվության փոխանակում	I և II կիսամյակներ	ՀՏԱԲ	Երկու հանդիպում՝ դրանց լուսանբանում տեսչական մարմնի առցանց աղբյուրներով և ՉԼՄ-ներով
----	--	--	--------------------	------	---

Նշումներ (հապավումներ)՝

- 1** ՀՀ կրթության տեսչական մարմին (**ԿՏՄ**)
- 2** Ռիսկի գնահատման, ստուգումների պլանավորման, վերլուծությունների և գնահատման վարչություն (**ՌԳՄԴՎԳՎ**)
- 3** Հանրակրթության վարչություն (**ՀՎ**)
- 4** Նախնական և միջին մասնագիտական կրթության վարչություն (**ՆՄՄԿՎ**)
- 5** Իրավական աջակցության և փաստաշրջանառության բաժին (**ԻԱՓԲ**)
- 6** Հանրության հետ տարվող աշխատանքների բաժին (**ՀՏԱԲ**)
- 7** Որակի ապահովման բաժին (**ՈԱԲ**)
- 8** Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն (**ԿԳՄՍՆ**)

XI. Խորհրդատվական գործառույթների ժամանակացույցներ

Աղյուսակ 1

ՀՀ կրթության տեսչական մարմնի հանրակրթության վարչության
2020 թվականի խորհրդատվական գործառույթների ժամանակացույց

N	Տնտեսավարող սուբյեկտներ	Անցկացման վայրը	Հանդիպման ժամկետը
	Երևան / մարզեր		
1.	Հանրակրթական ուսումնական հաստատություններ	Երևան / մարզ	Փետրվարի 2-3-րդ տասնօրյակներ, սեպտեմբերի 2-3-րդ տասնօրյակներ
2	Ավագ դպրոցների սովորողների և նրանց ծնողների հետ հանդիպում		Ապրիլի 2-3-րդ տասնօրյակներ, նոյեմբերի 2-3-րդ տասնօրյակներ
	Շիրակի մարզ		
3	Նախադպրոցական ուսումնական հաստատություններ	Անիի համայնքապետարան	Մարտի 2-րդ տասնօրյակ
	Արարատի մարզ		
4	Հանրակրթական ուսումնական հաստատություններ	Արարատի մարզապետարան	Մայիսի 1-ին տասնօրյակ
	Լոռու մարզ		
5	Նախադպրոցական ուսումնական հաստատություններ	Ալավերդու համայնքապետարան	Հունիսի 3-րդ տասնօրյակ
	Երևան / մարզեր		
6	Նախադպրոցական ուսումնական հաստատություններ	Երևան / մարզ	Հուլիսի 1-2-րդ տասնօրյակներ

Աղյուսակ 2

ՀՀ կրթության տեսչական մարմնի նախնական և միջին մասնագիտական կրթության վարչության
2020 թվականի խորհրդատվական գործառույթների ժամանակացույց

N	Տնտեսավարող սուբյեկտի անվանումը	Գտնվելու վայրը	Անցկացման վայրը,
---	---------------------------------	----------------	------------------

			Ժամկետը
ԵՐԵՎԱՆ			
1.	Երևանի պետական տեխնոլոգիական քոլեջ	Երևան	Երևան հունվար
2.	Հյուսիսային համալսարանի բժշկական քոլեջ		
3.	Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոն հիմնադրամ		
4.	Հայբուսակ համալսարանի բազային քոլեջ		
5.	ՀՊՏՀ Ֆինանսատնտեսագիտական քոլեջ		
6.	Երևանի Փ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստի պետական քոլեջ		
7.	Երևանի հենակետային բժշկական քոլեջ ՓԲԸ		
8.	ՀՀ ԱԻՆ ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա		
9.	Երևանի Ն.Աճեմյանի անվան տարածաշրջանային թիվ 2 պետական քոլեջ		
10.	Չարդակիրառական արվեստի արհեստագործական ուսումնարան		
11.	Ռ. Մելիքյանի անվան երաժշտական քոլեջ		
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ			
12.	Քաջարանի արհեստագործական պետական ուսումնարան	Քաջարան	Կապան ապրիլ
13.	Սյունիքի տարածաշրջանային պետական քոլեջ	Կապան	
14.	Կապանի պետական բժշկական քոլեջ	Կապան	
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ			
15.	Աբովյանի պետական քոլեջ	Աբովյան	Աբովյան փետրվար
16.	Աբովյանի կրթահամալիր		
17.	Աբովյանի պետական էներգետիկական քոլեջ		
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ			
18.	Արարատի տարածաշրջանային պետական քոլեջ	Արտաշատ	Արմավիր հունիս
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ			
19.	Վարդենիսի Բաղեյանի անվան քոլեջ	Վարդենիս	Մարտունի ապրիլ
20.	Գեղարքունիքի տարածաշրջանային պետական քոլեջ	Մարտունի	
21.	Գավառի պետական երաժշտական քոլեջ	Գավառ	
ԼՈՌԻ ՄԱՐԶ			
22.	Ալավերդու պետական քոլեջ	Ալավերդի	Վանաձոր մարտ
23.	Վանաձորի Մ. Թավրիզյանի անվան արվեստի պետական քոլեջ	Վանաձոր	
24.	Վանաձորի Ս. Թևոսյանի անվան պետական պոլիտեխնիկական քոլեջ		
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ			
25.	Նոյեմբերյանի պետական քոլեջ	Նոյեմբերյան	Վանաձոր մարտ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ			
26.	Էջմիածնի Վարդգես Համազասպյանի անվան պետական քոլեջ	Էջմիածին	Արմավիր հունիս
27.	Արմավիրի պետական ինդուստրիալ-մանկավարժական քոլեջ	Արմավիր	
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ			
28.	Արթիկի պետական քոլեջ	Արթիկ	Վանաձոր մարտ